

կանացն եւ Հիւանդանոցին ասպետաց. եւ իբրեւ զերծեալս 'ի ձեռաց նոցին եւ կողոպուտս յայլազգեաց՝ գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ. զԴարասակ՝ շնորհեաց կամ դարձոյց անդրէն յասպետս Հիւանդատանն, 'ի մտերիմ նիզակակիցսն իւր. զՊաղրաս՝ ինքեան սեփականեաց: Ժամանակակից դիպացս յիշատակագիր ոմն ազգային (յամի 1193), յայտ առնէ՝ զի ոչ միայն յԱնտիոք՝ այլ եւ 'ի վիճակ Լեւոնի դէմ եղեալ էր սուլտանին՝ մխիլ, այլ ոչ վստահացաւ. այսպէս ասելով. «Գայ 'ի սահմանս Անտիոքու. եւ քակեալ աւերեաց զաշխարհն եւ զամուրս նորա...: Կամեցաւ մտանել յաշխարհն Կիլիկիոյ, նոյնպէս կարծելով զնոսա (զՀայս) անարիս գոլ. քանզի գոռայր իբրեւ զառիւծ զօրաւոր, որ եւ դառնայր իբրեւ զաղուէս տկար»: Իսկ Լեւոն՝ որ ըստ անուանն՝ երթալով երթայր եւ առիւծանայր, վասն այսպիսեաց պսակահամբար արիական գործոց՝ ոչ միայն յայտնեցաւ այլ եւ հոչակեցաւ այր քաջ եւ պատերազմող. եւ առ կենդանեան ընթեռնումք զգրեալսն 'ի ժամանակակցաց, «Ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի՝ **Յաղթողի** եւ *Բարեպաշտի*». յոր կոչումն՝ ոչ իբրեւ վարկպարագի պատիւ թագաւորի, այլ իսկական գործ եւ արդիւն, կնքէր զնա եւ մեծն Լամբրունեցի՝ 'ի յետին գրչութեան իւրում (յամի 1198), «Լեւոն որ յՌոբինեանց՝ Բարեպաշտ եւ **Յաղթող**». որ եւ **Մեծայաղթող** ըստ կաթողիկոսին (Գր. Տղայ): Գրէր եւ այլն ոմն զգօն յիշատակագիր. «Տիրեաց մեծաւ յաղթութեամբ, որ զբազումս նուաճեաց զազգս եւ զաշխարհս, զմերս ընդարձակելով»: Իսկ աւարտող պատմագրութեան Միխայելի Ասորոց պատրիարքի, որ եւ ականատես թուի Լեւոնի, գրէ. «Արիագոյնն Լեւոն տիրեաց եօթանասուն եւ երկու բերդից. եւ էլ անուն նորա ընդ ամենայն երկիր... եւ էր այնուհետեւ թագաւոր ճոխ եւ անուանի, եւ ահարկու 'ի վերայ օտար ազգացն՝ որ շուրջ էին զնովար, եւ դողային 'ի նմանէ»: